

ԱԷՏԱՐԷՐ



“ԹՈՂ ՏՈՒՔԻ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՍԻ ՓԱՆ.” ԴՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԻԳ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒՆԻՍ 1, 1894

ԹԻԻ 6

ԱՐԳԵԼՈՒԱՆ ԳԻՐՔԸ

Այժմու Պէճիացի նկարիչն էրուն ամենէն նշանաւորներէն մին է Բարլ Օմս, որ ծնած է 1840ին: Անոր շինած նկարներէն շատերը կը լուսաբանեն իր հայրենեաց վերաբերեալ իրողութիւններ: Անոնցմէ մին, որ կը դտնուի Պրուսելի թանգարանին մէջ, կը կոչուի Արգելուած Գիրք: Եղաւ ժամանակ երբ Աստուածաշունչ կարգալը արգելուած էր Պէճիոյ մէջ. բայց Աստուծոյ խօսքին պատուականութեան համն առնողներէն շատեր կը պահէին գիրքը և ի ծածուկ կը կարդային: Ինչ կենդանի պատկեր է այս: Աղջկան սուր ականջները լած են մօտեցող քայլերուն ձայնը, և նա կ'աղաչէ իր հօրը որ Աստուածաշունչը իր ապահով պահարանը դնէ: Երբունի մարդուն երեսին վրայ ալ սոսկման նշաններ կը տեսնուին, բայց և այնպէս իր ձեռքը կը դնէ գիրքին բաց երեսին վրայ, իբր թէ չուզերով դադարեցնել օրհնեալ խօսքերուն ընթերցումը մինչև որ վտահ ըլլայ թէ վտանգը մօտ է: Շնորհակալ ըլլանք որ կ'ապրինք այնպիսի դարու մը և այնպիսի երկրի մը մէջ, ուր ամենայն ազատութեամբ կրնանք կարդալ Սուրբ Գիրքը:



ԲՈՊԻԿ ՈՏՔՈՎ

Գրեթէ քսան տարի առաջ գիւղի մը մէկ աղքատ քարոզիչը աշխատեցաւ համոզել մօտերը գտնուող բիրտ բնաւորութեամբ ընտանիք մը որ գրեթէ գնչուներու ընտանիք կոչուելու արժանի էր. այնատեցաւ համոզել որ թողուն իրենց թափառա-

կան կեանքը, վայելուչ ապրին, եկեղեցի երթան. Ի վերջոյ ըսաւ անոնց մօր, «Թող տղաքը մեր կիրակնօրեայ դպրոցը գան»: «Պէտք չէ որ դանբուպիկ ոտքերով» ըսաւ տղոց մայրը:

«Ձե՛մ ուզեր որ տղոցս վրայ լինդան»: Բայց կօշիկներ դնել անկարելի էր, քարոզչին քօակը պարապ էր: Վայրկեան մը մտածեց նա: «Ի՛մ տղաքս

ԱՐԳԵԼՈՒԱՆ ԳԻՐՔԸ

ալ բոսիկ ոտքով պիտի երթան, ուրեմն քու աղոյց վրայ պիտի չիմդանս” «Յակոբ, թովմաս, ի՞նչ կըսէք,” ըսաւ քանի մը ժամ ետքը իրիկուան սեղանին վրայ, «բոսիկ ոտքով այս աղաքը դպրոց կը տանի՞ք:» Յակոբ և թովմաս ծիծաղեցան քիչ մը ծռմուկելով իրենց երեսը, և ի վերջոյ հաւանեցան: Միւս աղաքը կիրակնօրեայ դպրոց գացին քանի մը ամիս, յետոյ ամբողջ ընտանիքը աներևութացան անկէ, և շուտով ելան քարոզչին մտքէն:

Անցեալ ամառ բարի քարոզիչը, որ հիմա գրեթէ ծերունի մը եղած է, քարոզեց հեռաւոր գիւղի մը մէջ, և երբ պաշտամունքն աւարտեցաւ, իր քովն եկաւ և ձեռքը սեղմեց երիտասարդ մը, այն թափառաչիկ աղոցմէ մին, որ մտակայ փոքր եկեղեցիի մը հովիւն էր:

«Ինչ որ եմ՝ ամէնը կը պարտիմ կօշիկներու վրայ ձեր այն մարդասիրական խրատին,” ըսաւ: «Այդ եղաւ առաջին մեծ մարդասիրութիւնը զոր տեսայ ես թշուառութեան օրերուն մէջ: Զիս խորհուրդի և գործի նոր ճամբու մը մէջ մտցուցիք, և կիրակնօրեայ դպրոցին բարի ներդրումութիւնը կատարեց մնացեալը: Հաւանականապէս ձեր աղաքը կը մտածէին թէ փոքր բան էր բոսիկ ոտքով դասի երթալ քանի մը կիրակիներ: Բայց այդ միջոցաւ մարդկային հոգի մը փրկուեցաւ:»

ՀԱՄԱՐԱՒԱՌՈՐ ԱՄՊՈՆ ՄԸ

Պրուսելի մայր եկեղեցին որ կը կոչուի Սբ. Կիւսիւլի եկեղեցի, ընդարձակ շէնք է երկու շատ բարձր աշտարակներով: Շէնքին մէկ մասը 600 տարիէ աւելի հնութիւն ունի: Ամպիտնը որ առաջ ուրիշ եկեղեցիի մը համար շինուեցաւ, քանդակագործութեան ամենէն ընտիր օրինակներէն մին է, քանդակագործին անունն է Ֆերպրիկ կէն: Մարդ պարտի նստիլ և ուսումնասիրել այս ամպիտնը տեսնելու համար թէ ի՞նչ բազմաշխատ գործ է այն: Ճակատին վրայ կը ներկայացուի Ադամի և Էւայի արտաքսու մը Եդեմի դրախտէն, և անոնց վերքը՝ մահուան պատկերը: Հասցիներու համար Աստուծոյ դէմ անոնց անհնազանդութեան արդիւնքը: Այսպիսի ամպիտներ կրնան զարդ ըլլալ, բայց չենք կարծեր թէ ազէկ բան են այդպիսի զարդերը: Քարոզչին պաշտօնն է ուշադրութիւն հրահրել Աստուծոյ թօքքին: Նա կ'ուզէ իր ունեւորներուն ուշադրութիւնը

հրահրել իր քարոզած ճշմարտութեանը. բայց այսպիսի չքնադ բանդակներ կամ ուրիշ չափազանց զարդեր կրնան եկեղեցոյ մէջ գտնուողներուն ուշադրութիւնը իրենց քաշել:

ԲԱՐԵՍԻՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՁ

Փարիզի արուարձաններուն մէջ բնակող աղքատիկ հեղինակ մը հինգ հարիւր քսան ֆրանք առնելիք ունէր

իր տան ճամբուն վրայ պատահող աղքատներուն: Թղթադրամն իր թղթածպանակին մէջ դրաւ, կատարեց իր բարեսիրական նպատակը, իրեն դիմող աղքատ մը պարապ ետ չդարձրնելով իր երկայն ճամբուն վրայ:

Երբ մտեցաւ իր տանը, խեղճ փոքրիկ շուն մը եկաւ իրեն, և մարդուն ուշադրութիւնը դրաւեց իր սոված տանջ վիճակով: Եթէ ուրիշ ատեն տեսած ըլլար զայն, թերևս բիրտ կեր-



ՀԱՄԱՐԱՒԱՌՈՐ ԱՄՊՈՆ ՄԸ

բայց երբեք չէր յուսար թէ պիտի գանձէր, վասն զի հին առնելիք էր և թէպէտ շատ անգամ դիմած էր պարտականին, պարտոյ ետ դարձած էր: Եւ սակայն բորորովին զորի մնալով ստակէ, որոշեց անգամ մըն ալ դիմել չվճարող պարտականին: Եւ ի՞նչ եղաւ իր հրացու մը և բերկրութիւնը երբ ձեռքին մէջ դրուեցաւ հինգ հարիւր ֆրանքնոց թղթադրամ մը և քսան ֆրանքնոց սակի մը: Նկատելով զայս իբրև մասնաւոր նախախնամական դէպք, որոշեց մանրութի վերածել այդ սակին, և յայտնել իր երախտագիտութիւնն առ Աստուած՝ ողորմութիւն առաւ

պով պիտի վռնաւր: Բայց այս իրեկուն մարդուն սիրտը բաց էր և որու շեց որ այդ խեղճ անասունը իր հետ տուն տանի: Իրաւ, իր կինը կատարեց շուները, բայց ինք վստահ էր թէ իր յաջողութիւնը տեսնելով պիտի քաղցրանար կնոջ սիրտը ինչպէս քաղցրացած էր իր սիրտը: Մտածն աղէկ մը կոխած էր երբ հասաւ տուն, և մտաւ ներս՝ շունն ալ իր հետ:

«Ի՞նչ է այդ,” պոռաց անկիներ, պատարաստուելով դուռնէն գարս վանել կենդանին: «Խեղճ, փոքրիկ շուն մը միայն, զոր համարձակեցայ հետս տուն բերել: Բայց մտիկ ըրէ, սիրե-

լիս, թէ ինչ յաջողութիւն ունեցայ՝”
 Երբ պատմեց բանը, բարի տիկնոջ
 սիրտը կակուցեալ, և փոքրիկ շունը
 դրեթէ մուգուեցաւ: «Ահա ստակը
 ամբողջ իմ թղթապանակիս մէջ է:”
 ըստ ամուսինը իր խօսքին վերջը,
 ձեռքը գրպանը խոթելով: Բայց թղթ-
 թապանակը հան չէր. ինկած էր գրք-
 պանէն, և յուսահատութիւնը պատեց
 խեղճ հեղինակին սիրտը: Բարի տիկ-
 նոջ բարկութիւնը բարդեցեալ, և իբր
 թէ յանցանքը շնիկին էր, գաւազան
 մը առնելով պոռաց, «Ի՞նչ, դժուար
 եթէ դուն չըլլայիր այս ապուշ մարդը
 իր ստակը պիտի չկորսնցնէր:”

Բայց շունը դուրս ելլել չէր ուզեր,
 և աւելի մտ կ'երթար կը քսուէր իր
 առաջին բարեկամին ստքերուն, որ
 այժմ քաջութիւն չունէր զինքն աղա-
 տելու: Տիկնոջ բարկութեամբ իր բազ-
 կաց վրայ առաւ զայն, ուժով մը դուրս
 նետելու պատրաստ, և ահա՛ տեսաւ
 որ շնիկը ամուր մը իր բերնով բռն-
 նած էր կորսուած թղթապանակը զոր
 մինչև այն առնն տեսած չէր մութին
 պատճառաւ: Թղթապանակը ճամբուն
 վրայ ինկած էր մարդուն գրպանէն և
 երկստաղէտ կենդանին վերջուցած
 էր գեանէն և ապահով պահած էր
 զայն:

Հեղինակին տան մէջ այսօր չկայ ա-
 ւելի պատուաւոր կենդանի մը քան
 այս գիրուկ և մաքուր շնիկը որ միշտ
 կրակարանին ամենէն տաքուկ անկիւ-
 նը կը գրաւէ:

ՓՈՒՆՏԻԹԱ ՌԱՄԱՊԱՅ

Այս նշանաւոր կինը ինքզինք նուի-
 բած է իդական սեռին դաստիարա-
 կութեան իր հայրենի երկրին, Հնդ-
 կաստանու, մէջ: Հայրը Անանթա Շաս-
 թրի, գիտուն և ազատական գողա-
 փարներու աէր մարդ, իր ամուսնու-
 թեան ժամանակը որոշեց սորվեցնել
 իր փոքրիկ հարսին, որ ինք տարեկան
 էր միայն. Հնդկաց սրբազան գիրքե-
 ըր, թէպէտ միայն քիչ Հնդիկ կիներ
 այն ժամանակ կարդալ սորված էին:
 Յետոյ անոր կինն ալ իր աղջկան Ռա-
 մապայի սորվեցուց: Ռամապայ և իր
 եղբայրը իրենց ծնողաց մեռնելէն ետքը
 ճամբորդեցին Հնդկաստանի զանազան
 կողմերը: Երբ Երանդ, ուր որ հաս-
 նէ իր ճամբորդութիւնը լոյսը պաշտ-
 պանէին իդական սեռի դաստիարա-
 կութիւնը: Կալկաթայի մէջ Ռամապայ
 մեծ տղաւորութիւն գործեց իր գիտու-
 թեամբ և պերճախօսութեամբ: Ամուս-
 նացաւ, բայց իր ամուսնին մեռնելէն
 ետքը դարձեալ սկսաւ իր ճառախօսու-

թիւնները, և ընկերութիւն մը կազ-
 մուեցաւ Հնդիկ կանանց դաստիարա-
 կութեան գործը յառաջ տանելու հա-
 մար: Ռամապայ 1883ին Անգղիա գը-
 նաց և անկէ Միացեալ Նահանգները
 և որովհետեւ քաջ Անգղիերէն կը խօ-
 սէր, շատ բարեկամներ վաստկեցաւ:
 Թէ՛ Անգղիա թէ՛ Ամերիկա: 1884ին
 Պոմպայի մէջ հիմնեց հաստատութիւն
 մը որ թէ՛ դպրոց է թէ՛ տուն բարձ-
 րագոյն դասակարգերու պատկանող
 անօգնական այրիներու համար: Ռա-
 մապայ երբ Անգղիա կը գտնուէր Ֆրիս-

գործու իր սրամարանու թեմէ, ինքնա-
 հաւան մարդն ալ ուրիշ կարգի կը վե-
 րաբերի. կը համարի թէ այնքան բան
 զիտէ որ պէտք չունի սորվելու, և կը
 կարծէ թէ իրմէ զատ ուրիշ մէկը չկայ
 բաւական բան գիտցող որ կարող ըլլայ
 իրեն սորվեցնել: Դժուար է սորվեցնել
 բան չգիտցողին, բայց աւելի դժուար
 է սորվեցնել այնպիսի անձի մը որ
 կը համարի թէ ամէն բան գիտէ: Թերեւ
 մտիկ կ'ընէ քաղաքավարութեամբ,
 բայց կը ժպտի արհամարհանքով, հատ-
 կըցնելով քեզի թէ գիտէ բոլոր խօ-



ՓՈՒՆՏԻԹԱ ՌԱՄԱՊԱՅ

տանեայ եղաւ: Անոր հիմնած վերո-
 յիշեալ տունը որ և իցէ կրօնք դաւա-
 նողներու համար բաց է, բայց Սաստա-
 ծաշունչը կը դրուի ամենուս արամա-
 դրութեան ներքեւ: Ռամապայ շատ մը
 երևելի Հնդիկներու աչքէն ինկած է,
 վասն զի իր աշակերտներէն ոմանք
 Բրիտանիայ եղած են,

ՄԱՐԿԻԿ ՈՐՈՑ ՉԵՍ ԿՐՆԱՐ ՍՈՐՎԵՏՆԵՆ

Շատ մարդոց մեծ գոռուարութիւնը
 այս աշխարհին մէջ՝ սա է որ չեն կրնար
 սորվիլ:

Օրինակի համար. կայ տգէտ, բժժա-
 միս, ապուշ և անար մարդ մը, իր
 միտքը բան մը չըմբռնէր, չես կրնար
 բան սորվեցնել իրեն: Բնագոյներու կը
 հետեի, հարկէն կ'առաջնորդուի, բայց
 չկառավարուի զաղափարներէ, չներ-

սածներդ, և կրնայ սորվեցնել քեզի
 եթէ զիջանի սորվեցնել:

Կիրքերու դերին սորվեցնել հնար
 չէ: Այն անձը որ կ'ուզէ վայելել
 ինչ որ կը փափարի, փոյթ չընելով
 հետեանքը, պէտք է որ սորվի փոր-
 ձառութեան դառն դասերովը քանի
 որ չկրնար սորվիլ ուրիշ կերպերով:

Կամապաշար կ'ատէ հրահանգու-
 թիւնը և կ'արհամարհէ գիտութիւնը:
 Ըսէ անոր ինչ որ կ'ուզես, ըրէ ինչ որ
 կ'ուզես, կարևորութիւն չտար, իր
 ճամբուն կը հետեի: Իր ճամբան կամ
 կերպը կրնայ յիմարական ըլլալ, գէշ
 ըլլալ, կործանարար ըլլալ, բայց տար-
 բերութիւն չըներ այդ ուղածը կ'ընէ,
 փոյթ չընելով թէ հետեանքն ինչ
 կ'ըլլայ:

Որչափ անձինք ի վերջոյ դառնա-
 պէս կը գղջան իրենց կամապաշտու-

